


[Ը/ԿՊ-2/384-2019]



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«13» հունիսի 2019թ.

N 76-Ն/1

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ
2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 176-Ա/1 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 700-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝
 - 1) աշխատանքի և զբաղվածության վարչության կանոնադրությունը՝ համաձայն N 1 հավելվածի

2) ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության կանոնադրությունը՝ համաձայն N 2 հավելվածի

3) կենսաթոշակային ապահովության վարչության կանոնադրությունը՝ համաձայն N 3 հավելվածի

4) հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության կանոնադրությունը՝ համաձայն N 4 հավելվածի

5) սոցիալական աջակցության վարչության կանոնադրությունը՝ համաձայն N 5 հավելվածի

6) ժողովրդագրության բաժնի կանոնադրությունը՝ համաձայն N 6 հավելվածի

7) ներքին աուդիտի բաժնի կանոնադրությունը՝ համաձայն N 7 հավելվածի

8) միջազգային համագործակցության և զարգացման ծրագրերի վարչության կանոնադրությունը՝ համաձայն N 8 հավելվածի

9) վերլուծության և մոնիթորինգի վարչության կանոնադրությունը՝ համաձայն N 9 հավելվածի

10) ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության կանոնադրությունը՝ համաձայն N 10 հավելվածի

11) գնումների համակարգման և տնտեսական հարցերի բաժնի կանոնադրությունը՝ համաձայն N 11 հավելվածի

12) իրավական ապահովման բաժնի կանոնադրությունը՝ համաձայն N 12 հավելվածի

13) հասարակայնության հետ կապերի բաժնի կանոնադրությունը՝ համաձայն N 13 հավելվածի

14) քարտուղարության կանոնադրությունը՝ համաձայն N 14 հավելվածի


2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2015 թվականի դեկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատելու, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2007 թվականի N 43-Ա/1, 2008 թվականի օգոստոսի 19-ի N 113-Ա/1, 2011 թվականի հուլիսի 27-ի N 57-Ա/1, 2013 թվականի փետրվարի 21-ի N 30-Ա/1 հրամաններում փոփոխություններ կատարելու, Հայաստանի Հանրապետության

աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2008 թվականի սեպտեմբերի 1-ի N 116-Ա/1 և 2012 թվականի հուլիսի 10-ի 62-Ա/1 հրամանները ուժը կորցրած ճանաչելու մասին» N 176-Ա/1 հրամանը:


3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

6/13/2019

X



Signed by: GASPARYAN GEMAFIN-2408840236



Ձ.ԲԱԹՈՅԱՆ